Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՄՈՏ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 26-ԻՆ ԺԱՄԸ 17:00 -ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 15-ՐԴ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ

Ա. Մինասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Գ. Մելքոնյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
Մ. Ժամկոչյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության գործադիր տնօրեն
Փ. Թադևոսյան	«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ-ի նախագահ
Ց. Գևորգյան	«Հայաստանի վաճառականների միություն» ՀԿ-ի նախագահ
Ա. Ալեքսանյան	Հայաստանի առևտրաարդյունաբերական պալատի գործադիր տնօրեն

Մասնակիցներ՝

Ա. Հովհաննիսյան	ՀՀ արդարադատության նախարար
Գ. Բարսեղյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ա. Ալավերդյան	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
Կ. Արեյան	Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ
Ծ. Սողոմոնյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Ա. Ասլանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության առաջատար մասնագետ
Ա. Օհանյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ՓՄՁ-ի զարգացման վարչության պետ

Լ. Չեխանովսկի	ԵՄ ծրագրի ղեկավար
Է. Սաֆարյան	ԵԱՀԿ տնտեսական ծրագրի ազգային պատասխանատու
Գ. Պողոսյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար
Է. Կիրակոսյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության գործադիր տնօրեն
Լ. Իսրայելյան	Եվրոպական բիզնես միության խորհրդի նախագահ
Ս. Գրիգորյան	«ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի փոխնախագահ

Հրավիրվածներ՝

Գ. Արզումանյան	ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդական
Ժ. Բաղդասարյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ՓՄՁ-ի զարգացման վարչության գլխավոր մասնագետ
Հ. Ավագյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի փորձագետ
Դ. Հարությունյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի փորձագետ
Ի. Հովհաննիսյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի փորձագետ

1. Նախորդ նիստի արդյունքների ամփոփում

1.1. ՓՄՁ-ների և խոշոր կազմակերպությունների համար տեղական տուրքերի տարանջատված չափերի սահմանման վերաբերյալ

(Կամո Արեյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի փաթեթը սահմանված կարգով շրջանառել ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից:

1.2. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6[1]-րդ հոդվածի կիրառության հետ առաջացած խնդիրների մասին

(Արմեն Ալավերդյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց հանձնարարել ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդական Գագիկ Արզումանյանին՝ շահագրգիռ մարմինների մասնակցությամբ կազմակերպել քննարկում և մինչև սույն թվականի սեպտեմբերի 20-ը հարցի կարգավորման վերաբերյալ ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանին ներկայացնել վերջնական առաջարկություն:

1.3. ՀՀ-ում Ազգային Բիզնես Ինկուբատորի ստեղծման վերաբերյալ

(Գևորգ Պողոսյան, Հովիկ Աբրահամյան)

1. **Քննարկումներից հետո որոշվեց** Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար Գևորգ Պողոսյանին՝

1) հաշվի առնելով այն, որ ՀՀ-ում Ազգային Բիզնես Ինկուբատորի ստեղծման հետ կապված հարցերի ուսումնասիրման նպատակով հրավիրվել է միջազգային փորձագետ՝ մինչև սույն թվականի հոկտեմբերի 31-ը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել ՀՀ-ում Ազգային Բիզնես Ինկուբատորի ստեղծման վերաբերյալ մանրամասն առաջարկություն.

2) հարցը քննարկման առարկա դարձնել խորհրդի հաջորդ նիստում:

2. Պետական գնումների շրջանակներում Հայաստանի Հանրապետությունում արտադրված ապրանքի ծագման երկրի հավաստագրի տրամադրման վերաբերյալ

(Իզաբելա Հովհաննիսյան, Հովիկ Աբրահամյան)

1. Քննարկումներից հետո որոշվեց ՀՀ էկոնոմիկայի նախարար Արծվիկ Մինասյանին՝

1) ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի ներկայացուցիչների հետ քննարկել պետական գնումների շրջանակներում տրամադրվող հավաստագրի արժեքի հարցը և 10-օրյա ժամկետում ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել իրավական ակտերի վերջնական նախագծերը.

2) ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդական Գագիկ Արզումանյանի առաջարկություններին համապատասխան՝ ուսումնասիրել ոլորտի միջազգային փորձը և ՀՀ ֆինանսների նախարարության, ինչպես նաև շահագրգիռ մյուս մարմինների մասնակ-ցությամբ կազմակերպել քննարկում բարձրացված հարցերի վերաբերյալ ու ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել առաջարկություն:

3. ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածից բխող խնդիրների քննարկման նպատակով ՀՀ վարչապետի 2015 թվականի մարտի 18-ի N 212-Ա որոշման համաձայն ստեղծված աշխատանքային խմբի քննարկումների և արդյունքների ամփոփման վերաբերյալ

(Իզաբելա Հովհաննիսյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց հանձնարարել ՀՀ արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանին՝ ուսումնասիրել ոլորտի միջազգային փորձը և ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, «Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ-ի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գործարարության աջակցման գրասենյակի ու մյուս շահագրգիռ մարմինների մասնակցությամբ կազմակերպել քննարկումներ և մեկշաբաթյա ժամկետում ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել խնդրի կարգավորման վերջնական առաջարկություն:

4. Հարկային Օրենսգրքի նախագծում տեղ գտած ՓՄՁ-ներին առնչվող խնդրահարույց դրույթների վերաբերյալ

(Հակոբ Ավագյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց հանձնարարել ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդական Գագիկ Արզումանյանին՝ կազմակերպել քննարկում ՀՀ էկոնոմիկայի նախարար Արծվիկ Մինասյանի և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Արմեն Ալավերդյանի մասնակցությամբ՝ Հարկային Օրենսգրքի նախագծում տեղ գտած ՓՄՁ-ներին առնչվող խնդրահարույց դրույթներին լուծում տալու մասով և արդյունքների մասին տեղեկատվություն ներկայացնել ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանին:

5. ՓՄՁ-ների և առևտրի կենտրոնների միջև գնորդ-մատակարար շղթայում առկա խնդիրների և սուպերմարկետներում, առևտրի կենտրոններում հայկական ապրանքներին առաջնահերթություն տալու անհրաժեշտության վերաբերյալ

(Հակոբ Ավագյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց հանձնարարել ՀՀ արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանին՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի համապատասխան մասնագետների մասնակցությամբ կազմակերպել քննարկում՝ ներկայացված հարցի խնդրահարույց դրույթներին լուծում տալու մասով և ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել խնդրի կարգավորման առաջարկություն:

6. ՓՄՁ զարգացման խորհրդի նոր անդամի ներգրավման վերաբերյալ

(Գարեգին Մելքոնյան, Հովիկ Աբրահամյան)

1. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել ՓՄՁ զարգացման խորհդի նոր անդամի՝ «ՓՄՁ համագործակցության ասոցացիա» ՀԿ-ի փոխնախագահ Սամսոն Գրիգորյանի թեկնածությունը.

2) խորհրդի նիստերին մասնակցելու նպատակով հրավիրել նաև ՀՀ արդյունաբերողների և գործարարների միության գործադիր տնօրեն Էդուարդ Կիրակոսյանին և Եվրոպական բիզնես ասոցիացիայի գործադիր տնօրեն Դիանա Սարումովային:

7. Այլ հարցեր

Քննարկումներից հետո որոշվեց հանձնարարել ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդական Գագիկ Արզումանյանին՝ քննարկել «Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ-ի նախագահ Փայլակ Թադևոսյանի կողմից բարձարացված՝ հարկային հաշիվների դուրսգրման էլեկտրոնային համակարգի գերծանրաբեռնվածության հետևանքով վերջինիս խափանման խնդիրների, լուծման ուղիների և արդյունքների մասին տեղեկատվություն ներկայացնել ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ